

զգաստ (նոյն, 232-3): Այսպէս եւ Գրիգոր կլթղ. Քարաւէժ ձերբակալուեցաւ իւր հակառակորդներէն՝ «մինչդեռ էին նստեալ ի սեղանն ի ժամ ճաշոյն» (Հյպոթ. 412):

Գինեմուլութիւնն հանդիսատես կ'ընէ զմեզ նաեւ վիպային ողբերգախառն տեսարանաց: Բակուրի ընթրեաց մէջ բազրատունին Տրդատ «յուրախանայն գիւնով՝ ... տրփեցաւ» անոր հարձին ու պահանջեց զայն: Կոչնատէրը բնականապէս մերժեց: Այն ժամանակ խելակորոյս իշխանը «բուռն հարեալ ի կինն, յիւրն քարշեաց ի բազմականն, շամշելով վաւաշէր»: Վերցատկեց Սիւնեցին՝ եւ անոր հետ ուրիշներ ալ՝ ազատելու կինը: Տրդատ կորզեց սեղանէն ծաղկակալ սկուտղը, հարուածներ տեղացուց իւր դէմ յարձակող բարձակցաց վրայ, քաշեց տարաւ կինը, աշտանակեց ձին եւ ի Սպեր հասաւ (Խոր. 142): — Նման դէպք մ'ալ պատահեցաւ Շապուհ պարսկի կոչնոց մէջ: Խոսրով զարդմանացին «ի գիւնոջ զեղիսեայ, ... զօրէն սեղեխի տովեցելոյ» ջնարահար կնոջ մ'ետեւէն վազեց: Պարսիկը բարկացած՝ հրամայեց բռնել զայն. բայց Գարդմանացուոյն վազակաւորն ահագնարար շողաց բազմութեան մէջ, եւ դիւրացուց անոր անվնաս փախուստը (նոյն, 250):